

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՐԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳԻ ՊԱՊՈՑԱՆ

**«ՏՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ
(հայերենի զուգադրությամբ)**

**Ժ.02.07-«Գերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Է. Հ. Ղազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Յ. Մ. Գաբրիելյան
Բ.Գ.Թ. Ն. Ն. Մկրտչյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 12:30-ին՝ ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (0025, Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. սեպտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

ՄԵԾԵՍԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գլոբալացման և միևնույն ժամանակ ազգային ինքնագիտակցության զարթոնքի պայմաններում ավելի է կարևորվում ինչպես ինքներս մեզ, այնպես էլ ուրիշներին ճանաչելու խնդիրը: Այս պահանջով է բացատրվում նաև լեզվաբանության շրջադարձը դեպի լեզվի ուսումնասիրության մարդաբանական հարացույց: Այս համատեքստում մեծ հետաքրքրություն են ներկայացնում ճանաչողական՝ մասնավորապես հասկացութաբանական հետազոտությունները: Սրանով է պայմանավորված **թեմայի արդիականությունը**:

Սույն հետազոտության մեջ մենք հիմնվում ենք առաջին հերթին ճանաչողական լեզվաբանության այն դրույթի վրա, որ «լեզուն թույլ է տալիս առավել բնական մուտք դեպի գիտակցություն»¹ և «ճանաչողական գործունեության առավել բնորոշ տեսակներից մեկն է»²: Դեռ իր ժամանակին Ռ. Ռասկը բացահայտել է, որ մեր լեզվում կան բառեր և բառիմաստային խմբեր, որոնք ավելի մեծ տեղեկություն են պարունակում տվյալ լեզվի, մշակույթի, հետևաբար նաև այդ մշակութակիրների լեզվական գիտակցության վերաբերյալ, ուստի դրանց ուսումնասիրությունն արժեքավոր տեղեկություններ կարող է տալ բոլոր ճանաչողական գիտակարգերին: Այս տեսակետից **«տուն»** հասկացության անտարակույս մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Սույն հետազոտության նյութի **աղբյուր** են հանդիսացել բառարանների, թեզաուրուսների, գերմաներենի **IDS Mannheim** և արևելահայ «ԱՐԵՎԱԿ» ազգային էլեկտրոնային շտեմարանները, դարձվածաբանական բառարանները, ինչպես նաև Բավարիայի երկրամասի Ռեգենսբուրգ քաղաքի և Երևանի պետական լեզվաբանական համալսարանների ուսանողների հետ անցկացված **գիտափորձի** արդյունքները:

Հետազոտության **նպատակն** է՝ վեր հանել հետազոտվող **«Haus»** հասկացության առանձնահատկությունները գերմաներենի հասկացության ոլորտում և պարզել, թե ինչպիսի կառուցվածք ունի տվյալ հասկացությամբ գերմանացի լեզվամշակութակիրների գիտակցության մեջ, ապա նաև զուգադրել հայերենի նյութին:

¹ Кубрякова Е. С. Язык пространства и пространство языка (к постановке проблемы) // Известия РАН. Серия литературы и языка, 1997, т. 56, № 3, с. 22.

² Лакофф Дж. Мышление в зеркале классификаторов // Новое в зарубежной лингвистике. Вып. XXIII. Когнитивные аспекты языка. М.: Прогресс, 1988, с. 31.

Առաջադրված նպատակին հասնելու համար կարևոր է **«Haus»** հասկացության իմաստաբանական կադապարի ստեղծումը, որն ուղղակիորեն կարտացոլի աշխարհի լեզվական պատկերը տվյալ լեզվամշակույթում:

Ուսումնասիրության համար ***հայեցակարգային հիմք*** են հանդիսացել Գ. Ռիքիայթի, Է. Ռոշի, Զ. Լակոֆի, Մ. Շվարցի, Զ. Դ. Պոպովայի, Ի. Ա. Ստերնինի, Ս. Գ. Տեր-Մինասովայի, Ս. Գ. Վորկաշովի, Ն. Դ. Արությունովայի, Յու. Ս. Ստեպանովի և այլ տեսաբանների աշխատությունները: Գերմանացիների և հայերի աշխարհի լեզվական պատկերում **«Haus/տուն»** հասկացության իմաստային դաշտի կադապարը պատկերելու համար հատկապես հետևել ենք ճանաչողական լեզվաբանության և հասկացութաբանության ռուսական դպրոցի տեսաբանների այն դրոյթներին, ըստ որոնց հասկացություն ունի կոտ կառուցվածք՝ կազմված **միջուկից, նախամիջուկային գոտուց և լայնարձակ եզրից**: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս հասկացության բովանդակային և կառուցվածքային հատկանիշների կազմում վեր հանել երկու լեզուներին բնորոշ ազգային-մշակութային բաղադրիչները:

Ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ ***խնդիրները***.

- ուսումնասիրել **«Haus»** հասկացության բառարաններում ամրագրված իմաստները, կատարել բառարանային իմաստների համեմատություն և վերհանել ամենաբնորոշ իմաստները, զուգադրել հայերենի «տուն» հասկացության բառարանային իմաստներին,
- ուսումնասիրել գերմաներենի IDS Mannheim ազգային էլեկտրոնային շտեմարանի նյութերը և համեմատել **«Haus»** հասկացության շտեմարանի իմաստները բառարանային իմաստների հետ, ուսումնասիրել նաև արևելահայ «ԱԲԵՎԱԿ» շտեմարանը և զուգադրել «տուն» հասկացության շտեմարանի իմաստները **«Haus»** հասկացության շտեմարանի իմաստներին,
- կատարել ազատ զուգորդային գիտափորձ **«Haus»** հասկացությամբ և ներգրավել գիտափորձի արդյունքները հետազոտության մեջ՝ ամբողջականացնելով **«Haus»** հասկացության իմաստային դաշտը զուգորդումների միջոցով, պարզաբանել զարգացման միտումները, ապա զուգադրել զուգորդային գիտափորձի արդյունքները «տուն» հասկացությամբ գիտափորձի արդյունքներին,
- ուսումնասիրել **«Haus»** բաղադրիչով դարձվածային միավորները, բացահայտել տվյալ լեզվամշակույթի համար բնորոշ իմաստները դրանցում և զուգադրել հայերենի «տուն» բաղադրիչով դարձվածային միավորներում առկա իմաստներին,

- ներկայացնել **«Haus»** հասկացույթն առկայացնող միջոցները տարբեր մակարդակներում՝ բառային-դարձվածային, ձևաբանական-բառակազմական և զուգադրել հայերենի նյութին,
- ներկայացնել **«Haus»** հասկացույթի իմաստային դաշտի կառուցվածքը և զուգադրել հայերենի նյութին:

Այս խնդիրներն իրագործելու համար կիրառվել են իմաստային դաշտի կաղապարման, ընտրանքային, բաղադրիչային վերլուծության, զուգորդային գիտափորձի, զուգադրական *մեթոդները*:

Բազմաթիվ հետազոտողներ են անդրադարձել «տուն» հասկացույթի ուսումնասիրությանը: Լուսաբանվել են «տան» ճանաչողական հատկանիշները առանձին գրողների ստեղծագործություններում: «Տուն» հասկացույթն ուսումնասիրվել է նաև հայերենի և անգլերենի զուգադրամբ: Անհրաժեշտ է նշել, որ գերմաներենում հասկացույթները գրեթե հետազոտված չեն, ուստի գերմաներեն հասկացույթների ցանկացած հետազոտություն ինքնին *նորույթ* է, հայերենի հետ զուգադրությունն՝ առավել ևս: *Նորույթ* է նաև հասկացույթը իմաստային մանրադաշտերի սկզբունքով նկարագրման մեր մոտեցումը: Առաջին անգամ է փորձ կատարվել նկարագրել **«Haus»** հասկացույթի մակրոդաշտը նրա մեջ մտնող մանրադաշտերով՝ ըստ Ջ. Դ. Պոպովայի և Ի. Ա. Ստերնինի առաջարկած իմաստաբանական կաղապարի: Բառարանների և շտեմարանների լեզվական նյութին զուգահեռ հասկացույթի բովանդակության ուսումնասիրության մեջ ներառվել է նաև զուգորդային գիտափորձի նյութը, որն ուսումնասիրությունը մասնակիորեն տեղափոխում է նաև գործաբանության դաշտ և ավելի պարզորոշ է դարձնում բառի իմաստաբանական զարգացման միտումները ներկայիս կենդանի շփումներում:

Աշխատանքի *տեսական նշանակությունն* է, որ նրանում ամփոփ ներկայացվում են աշխարհի հասկացութայնացման հորինվածքները (մեխանիզմները), գերմաներենի **«Haus»** հասկացույթի բովանդակության և լեզվական օբյեկտիվացման մասին արդեն գոյություն ունեցող պատկերացումները համալրվում են լեզվական գիտակցության մեջ **«Haus»**-ի հանդես բերած ազգային յուրօրինակություններով: Հավաքվել և դասակարգվել է մեծ ծավալի տեսական նյութ, ներգրավվել են նաև գերմանացի ճանաչողաբանների մետեցումները, որոնք, անտարակույս, կհետաքրքրեն հայ ընթերցողին: Հետազոտությունը կարող է տեսական հիմք ստեղծել նաև այլ հասկացույթների ուսումնասիրության համար:

Գործնական առումով առանձնակի կարևորություն ունի տարբեր աղբյուրներից հավաքված և մեկտեղված հսկայաձավալ լեզվական նյութը, որը կարող է օգտագործվել լեզվամշակութաբանական, միջմշակութային հաղորդակցության, հասկացութաբանական հետազոտություններում, ինչպես նաև համապատասխան դասընթացներում: Այն կարող է կիրառվել նաև գերմաներենից հայերեն, հայերենից գերմաներեն հատկապես մշակութային արժեքների փոխանցման նպատակով կատարվող թարգմանություններում:

Հետազոտության **հիմնական դրույթները** հավանության են արժանացել Երևանի Բյուստվի անվան լեզվաբանական համալսարանի գերմաներենի ամբիոնի քննարկումների ժամանակ: Աշխատանքի բովանդակության վերաբերյալ տպագրվել են հոդվածներ:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (բաժանված ենթագլուխների), եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև համառոտ անդրադարձ է կատարվում աշխատանքի կառուցվածքին՝ ըստ գլուխների ու ենթագլուխների:

Առաջին գլուխը («Հասկացութային լեզվաբանական հիմքերը») բաղկացած է չորս ենթագլխից: **«Լեզվաճանաչողական հիմքը»** ենթագլխում ներկայացված և վերլուծված են ճանաչողականության հիմքերը, ճանաչողական լեզվաբանության՝ որպես միջգիտակարգային ոլորտի և միաժամանակ ճանաչողականության՝ որպես համալիր գիտակարգի, զարգացման նախադրյալներն ու հիմնական դրույթները: Անդրադարձ է կատարվել նաև ճանաչողական լեզվաբանության առաջադրած խնդիրներին, այն է՝ ուսումնասիրել լեզվագիտակցության հետ կապված մտածական գործընթացներն ու իրավիճակները:

Երկրորդ ենթագլխում («Լեզվամշակութաբանական հիմքը») ուսումնասիրվում է լեզվի և մշակութային կապը և դրանց փոխադարձ ազդեցությունը: Ելակետային է այն, որ մշակույթը ձևավորում և կազմակերպում է լեզվական անհատին, ձևավորում է լեզվական կարգերն ու հասկացությունները, բայց և ձևավորվում և արտահայտվում է լեզվի միջոցով: Վերջին տարիներին մշակույթը հետազոտողների ուշադրության կենտրոնում է, քանի որ ուսումնասիրությունը լեզվի միջոցով լեզվական նյութին կարող է անչափ ծանրակշիռ, հաճախ ինքնաբավ տեղեկություն հաղորդել աշխարհի և մարդու

մասին: Լեզուն էլ դիտարկվում է որպես մշակույթի արդյունք ու նրա գոյության պայման, միևնույն ժամանակ այն ներկայացվում է որպես ազգի մշակույթի և հոգեկերտվածքի մեկնաբանման միջոց: Մարդը ճանաչում է աշխարհը ինքն իրեն և իր մտավոր ու փաստացի գործունեությունն այդ աշխարհում ճանաչելու միջոցով: Որպես հզոր հասարակական գործիք լեզուն մարդկային բազմությունը վերածում է էթնոսի, ձևավորելով ազգ, մշակույթ և փոխանցելով նրա փորձն ու ավանդույթները, այն է՝ ազգային գիտակցությունը:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում («Հասկացույթ» լեզվամշակութային եզրույթի բովանդակությունն ու կառուցվածքը) մանրամասն քննության է ենթարկվել **հասկացույթ** լեզվամշակութային եզրույթը: Հիմնվելով հասկացույթի բազմաթիվ բնորոշումներում հանդիպող ընդհանուր բնութագրիչների վրա, փորձել ենք սահմանազատել «հասկացույթ»-ը «հասկացություն»-ից: «Հասկացույթ»-ը և «հասկացություն»-ը ընդհանուր ծագում ունեն և միասնական գործաբանական ուղղվածություն, և այդուհանդերձ նրանք տարբերվում են իրենց իմացաբանական հիմքերով: *«Հասկացության բովանդակությունը գտված է, այն կուռ կառուցվածք ունի և բյուրեղացած է խիստ, համակարգված կառուցվածքի մեջ, իսկ հասկացույթի կազմը նախ և առաջ տարբերակային է, դինամիկ և հոսուն»*³: Հասկացույթն այն պատկերացումների, հասկացությունների, գիտելիքների, զուգորդումների, ապրումների «ամբողջությունն» է, որն ուղեկցում է բառին և նրանով արտահայտված հասկացությանը: Խմբավորել ենք հասկացույթի բնորոշումներն ըստ **ճանաչողական, լեզվաբանական, մշակութային** մտեցումների, ինչն ավելի է ընդգծում հասկացույթի ոչ հստակ սահմաններն ու ընդգրկունությունը: Չնայած հասկացույթի տարբեր բնորոշումներին, բոլոր հետազոտողները միակարծիք են, որ հասկացույթը *պայմանական մտային կառույց է, որն ունի ճանաչողական նշանակություն և գոյություն չունի մտածողությունից դուրս*: Ըստ Յ. Ս. Ստեպանովի՝ «Հասկացույթը մշակույթի միկրոմոդելն է, նրա բազային միավորն ու թանձրուկը» և այն «ոչ միայն ապրվում է, այլև հանդիսանում է զգայությունների, համակրանքի և հակակրանքի, անգամ բախումների արդյունք»⁴:

«Հասկացութաուրրտ և իմաստային դաշտ» ենթագլխում քննարկվում է հասկացութաուրրտը՝ որպես «տվյալ ազգի բոլոր հասկացույթների

³ Григорьева А. Д. Язык поэзии XIX – XX вв. М.: Наука, 2003, с. 53.

⁴ Степанов Ю. С. Константы: Словарь русской культуры. Опыт исследования. М.: Школа «Языки русской культуры», 1997, с. 41.

համակարգված ամբողջություն»⁵, այն բնութագրվում է որպես «հասկացություններից կազմված մի պատ, որտեղ բոլոր քարերը թեպետ պահում են իրար, սակայն ամեն մեկն իր ձևով»⁶: **Հասկացութաոլորտը** ներկայացվում է որպես աշխարհի տարբեր երևույթներն ընդհանրացնող հասկացություններից բաղկացած մտածական ոլորտ: Ներկայացվում են հասկացությանացման և կարգայնացման գործընթացները, խոսվում է հիմնատիպերի և իմաստային դաշտերի մասին:

Երկրորդ գլուխը («Haus» հասկացության լեզվաձևաչափական և լեզվամշակութային ըմբռումները գերմաներենում՝ հայերենի զուգադրությամբ) բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում («Haus/տուն» հասկացության լեզվամշակութաբանական զուգադրություն) անդրադարձ է կատարվում գերմանական և հայ լեզվամշակույթներում «տուն» արտեֆակտի զարգացման պատմությանը՝ նախամարդու վաղնջական կացարաններից սկսած մինչև մերօրյա շքեղ շինություններն և երկնաքերերը: «Տուն»-ը դիտարկվում է որպես մշակութային, ժամանակագրական, հասարակական երևույթ: «Տուն»-ն աշխարհի շատ ժողովուրդների լեզվական, գեղարվեստական կարևորագույն պատկերներից և ստեղծագործությունների կարևոր թեմաներից է: Այս առումով ուսումնասիրվել են ինչպես «Haus»-ը և «տուն»-ը, այնպես էլ «Heim»-ը և «օջախ»-ը որպես գեղարվեստական կարևոր պատկերներ գերմանական և հայ լեզվամշակույթներում: Աշխատանքում ներկայացված է ստեղծագործությունների ցանկ/որը չի հավակնում ամբողջական լինել/, որոնց վերնագրերում հանդիպում են «Haus/տուն» և «Heim/օջախ» բառույթները: «Տուն»-ը որպես բաղադրիչ հանդիպում է անգամ անձնանուններում և տեղանուններում, որը մեկ անգամ ևս վկայում է նրա հատաքրքիր մշակութային երևույթ լինելու փաստը: Լինելով մշակութային երևույթ՝ այն, այդուհանդերձ, տարբեր մշակույթներում տարբեր կիրարկություն ունի՝ պայմանավորված տվյալ ժողովրդի լեզվական մտածողության առանձնահատկություններով, այդ առանձնահատկություններն էլ ուղղակիորեն բխում են մշակութային տարբերություններից՝ պայմանավորված տվյալ ժողովրդի պատմական փորձով և արժեհամակարգով:

⁵ Попова З. Д., Стернин И. А. Очерки по когнитивной лингвистике. Воронеж: Истоки, 2001, с.

19

⁶ Делез Ж., Гваттари Ф. Что такое философия? / Пер. с фр. и послесл. С.Н. Зенкина. М.: Институт экспериментальной социологии, СПб.: Алетейя, 1998, с. 144.

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Haus» հասկացության բառարանային իմաստները՝ հայերենի զուգադրությամբ») ուսումնասիրվում են «Haus» հասկացության բառարաններում ամրագրված իմաստները, այնուհետև այդ իմաստները զուգադրվում են «տուն» հասկացության բառարանային իմաստներին: Վերհանվել են երկու լեզուների համար ընդհանուր հետևյալ իմաստները՝

1. *Wohnung - բնակարան, կացարան, 2. Gebäude- շենք, շինություն, 3. Familie - ընտանիք, 4. Unternehmen – ձեռնարկություն, 5. Heimat - հայրենիք, 6. Haushalt- կենցաղ (ընտանեկան տնտեսություն), 7. Dynastie - ցեղ, դինաստիա, 8. Gebäude, das zu einem bestimmten Zweck errichtet wurde - որոշակի նպատակի ծառայող շինություններ, 9. Gesamtheit der Hausbewohner - տան մեջ ապրողները:*

Առանձնացվել են միայն գերմաներենին բնորոշ հետևյալ իմաստները. 1. *Personen, die sich in einem bestimmten Haus befinden, 2. Mensch/Person, 3. Tierkreiszeichen in seiner Zuordnung zu einem Planeten, 4. einer der zwölf feststehenden Abschnitte, in die der Tierkreis eingeteilt ist*, ինչպես նաև միայն հայերենին բնորոշ իմաստները՝ 1. *տան հարկ, 2. տան կենտրոնական աչքը, որի վրա գտնվում է երդիկը, 3. կին, 4. ոտանավորի տուն, 5. Սուրբ գրքի մեջ փոքր հատված, 6. նարդախաղի մեջ՝ խաղացողներից յուրաքանչյուրի մտքի աջ կամ ձախ բաժանմունքը, 7. գութանին լծված ամեն մի լուծը, 8. ջուլհակի բանկահում նետի տակ գտնվող փայտը, 9. մի զգեստ կարելու համար հարկավոր բոլոր պարագաները* : Աչքի է զարնում, որ երկու լեզուների բոլոր բառարաններում էլ առաջին իմաստներն են «բնակարան/կացարան»-ը և «շենք/շինություն»-ը, մյուս իմաստների հաջորդականությունը տարբերվում է:

«Haus/տուն» հասկացությոը գերմաներենի IDS Mannheim և արևելահայերենի «ԱՐԵՎԱԿ Էլեկտրոնային շտեմարաններում» ենթագլուխը նվիրված է շտեմարանի նյութի ուսումնասիրությանը, որն անհրաժեշտ է հասկացության իմաստային դաշտի ամբողջական պատկերն ստանալու համար: Ավելի տեսանելի պատկեր ստանալու նպատակով ուսումնասիրվել է նաև արևելահայերենի «ԱՐԵՎԱԿ» ազգային շտեմարանի նյութը: Շտեմարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա են բառարանային բոլոր իմաստներն առանց բացառության, ընդ որում կարևորագույն իմաստները (*Wohnung- բնակարան, Gebäude- շենք, Familie- ընտանիք, Heimat/Land- հայրենի երկիր, Unternehmen- ձեռնարկություն, Gebäude zu einem bestimmten Zweck- որոշակի նպատակի ծառայող շինություն, Haushalt- կենցաղ, Dynastie- դինաստիա, das Weisse Haus- Սյիտակ տուն, Firma- ֆիրմա*), ինչպես և սպասվում

էր, ավելի մեծ թիվ են կազմում, քան երկրորդական իմաստները (գերմաներենում՝ *Mensch, einer der zwölf feststehenden Abschnitte, in die der Tierkreis eingestellt ist, Tierkreiszeichen in seiner Zuordnung zu einem Planeten* և հայերենում՝ *կին, բանաստեղծության տուն, տունտուլակ/խաղալիք, խելք, ամոյ*)⁷: Բացի նշված իմաստներից շտեմարանում հանդիպում են բառարանում չամրագրված իմաստներ, հարանշանակություններ՝ պայմանավորված կոնկրետ իրադրությամբ կամ հասարակական, քաղաքական տեղաշարժերով: Միայն գերմաներենին բնորոշ այդպիսի իմաստներն են՝ *Schneckenschale, Europäisches Haus*, իսկ հայերենում հանդիպում է *երածշտուրդան մեջ տուն* իմաստը: *Union/միություն* իմաստը ամրագրված չէ որևէ բառարանում, սակայն հանդիպում է երկու լեզուների շտեմարաններում:

Ուսումնասիրել ենք նաև շտեմարաններում «Heim/օջախ» բառույթներով առկայացող իմաստները: Երկու լեզուների համար ընդհանուր են՝ *բնակարան/կացարան, օջախ/հարազատ տուն և հաստատություն* իմաստները: Միայն գերմաներենին բնորոշ են «Heim»-ի *Wohnstätte für einen bestimmten Menschenkreis (vorläufiges Heim, Asylheim, Jugendheim, Altersheim, Weisenheim, Erholungsheim), Heimat, Parlament, Nest, Tierheim* իմաստները, որոնցից *Heimat, Parlament, Nest, Tierheim* իմաստները բառարաններում ամրագրված չեն: Հայերենին բնորոշ են *ընտանիք, կրակի օջախ, (փխբ) հասարակաց տուն, գործարան, համայնք, պետություն, կենցաղային սարք, հիվանդության օջախ* իմաստները, իսկ շտեմարանի *հասարակաց տուն (փխբ), գործարան, համայնք, պետություն, կենցաղային սարք* իմաստները բառարաններում չեն հանդիպում:

Այսպիսով, շտեմարաններն ավելի ակնառու են ի ցույց դնում «Haus/տուն» հասկացույթի իմաստային դաշտի բազմաշերտությունն ու բովանդակային ծավալը և չեն կրկնում միայն բառարանային իմաստները:

Երկրորդ գլխի ««Haus/տուն» հասկացույթը գուգորդային գիտափորձի լույսի ներքո» ենթագլխում ամփոփված են ԳՖՀ-ի Բավարիայի երկրամասի Ռեգենսբուրգ քաղաքի և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանների ուսանողների հետ անցկացված գիտափորձի նկարագրությունը և գուգորդումների վերլուծության արդյունքները, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել «Haus/տուն» հասկացույթի իմաստային դաշտի վերաբերյալ: Ջուզահեռներ են անցկացվել

⁷ Ուժտուն, խարզնտուն, խնձորտուն, մկնտուն, փոշետուն, հորետուն նշանակում են գութանին լծված յուրաքանչյուր եզր և հանդիսանում են ամուլ բառի հոմանիշները:

բառարանային, շտեմարանային տվյալների և զուգորդումների միջև: Նման մոտեցումը թույլ է տալիս մասնակիորեն տեղափոխել հետազոտությունը գործարանության դաշտ և էմպիրիկ ճանապարհով բացահայտել **«Haus/տուն»** հասկացության լեզվամշակութային առանձնահատկությունները և բացահայտել դրա իմաստային զարգացման միտումները:

Գիտափորձի մասնակից երկու նպատակային խմբերի զուգորդումները վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ բառարանների առաջնային իմաստները զուգորդումներում պակաս հաճախականությամբ են հանդես եկել, իսկ *ընտանիք* իմաստը զարմանալիորեն ամենահաճախ հանդիպող զուգորդումն է թե՛ գերմանացի, թե՛ հայ փորձարկվողների մոտ: Եթե **Duden**-ի բառարանում *Familie* իմաստը 7-րդ տեղում է, իսկ **Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում՝ ընտանիք**-ը՝ 3-րդ տեղում, ապա ըստ գիտափորձի արդյունքների՝ թե՛ գերմանացի, թե՛ հայ փորձարկվողների զուգորդումներում **«Haus/տուն»** հասկացության *Familie/ընտանիք* իմաստը հայտնվել է առաջին տեղում, և եթե տվյալ հասկացության իմաստաբանական բնութագիրը կազմելու լինեինք ըստ զուգորդումների արդյունքների, ապա *շենք/շինություն* և *կացարան* իմաստներն իրենց տեղը կզիջեին *Familie/ընտանիք* իմաստին: Ստացվում է, որ թեպետ **«Haus/տուն»**-ը մշակութային հասկացությո է և մնացած մշակութային հասկացությունների նման դժվար է ձևափոխության (մոդիֆիկացիայի) ենթարկվում, սակայն գիտափորձի արդյունքների համաձայն չի բացառվում, որ դրա հետագա զարգացումները կարող են փոխել նրա հիմնական, լեզվակիրների գիտակցության մեջ կարծրացած իմաստների դասավորությունը:

Չուգորդային գիտափորձի արդյունքներն ամփոփելիս ի հայտ եկան նաև ազգամշակութային և լեզվամշակութային հետաքրքիր առանձնահատկություններ՝ կապված լեզվակիր-մշակութակիրների հոգեկերտվածքի, ազգային գիտակցության, ավանդույթների և սովորույթների, աշխարհընկալման հետ: Թե՛ գերմանացի, թե՛ հայ փորձարկվողների զուգորդումներում բազմաթիվ են այս հասկացության հետ կապված զգայական, գնահատողական բնույթի զուգաբառերը, ինչպես՝ *ուրախություն, ջերմություն, երջանկություն, պաշտպանվածություն, հարմարավետություն* և այլն: Գերմանացի փորձարկվողների զուգորդումներում բավական հաճախ են հանդիպում **«Haus»** հասկացության ֆինանսական-ուտիլիտար բնույթի զուգորդական կապեր, ինչպես՝ *Investition fürs ganze Leben - դրամական ներդրում ողջ կյանքի համար, Hypothek - վարկ, bauen - կառուցել, verkaufen -*

վաճառել և այլն, որոնք հայ փորձարկվողների զուգորդումներում ընդհանրապես չեն հանդիպում: Փոխարենը միայն հայ փորձարկվողների զուգորդումներում է, որ դրական իմաստներին զուգահեռ հանդիպում են նաև բացասական երանգ ունեցող այնպիսի զուգորդումներ, ինչպես՝ *խառնաշփոթ, վեճ ու կոհիվ* և այլն: Միայն հայ փորձարկվողների մոտ են հանդիպում *հյուր, հյուրասիրություն, հյուրասենյակ* զուգաբառերը, որոնք վկայում են հայի ազգային գիտակցության մեջ «տուն» հասկացության այս իմաստի կարևորության մասին: Գերմանացի փորձարկվողների *Ordnung* - *կարգ ու կանոն* և *Sauberkeit* - *մաքրություն* զուգաբառերն էլ վկայում են նրանց գիտակցության մեջ «**Haus**» հասկացությամբ լրացնող այս հատկանիշների կարևորության մասին: Հայ փորձարկվողների զուգորդումներում հանդիպում է նաև **մեր** ստացական դերանունը, որը շեշտադրում է հայ մարդու աշխարհընկալումներում **իր և ուրիշի տունը** հակադրելու միտումը: Այս հակադրությունը հանդիպում է նաև գերմաներենի դարձվածային միավորներում, սակայն ոչ գերմանացի փորձարկվողների զուգաբառերում: Գերմանացի փորձարկվողները տվել են նաև նկարագրական պատասխաններ՝ բառակապակցություններ և դարձվածքներ (*die eigenen vier Wände, my home is my castle, ein «prototypisches» Haus wie das von Tiger und Bär im Zeichentrickfilm «Wo gehts hier nach Panama»*), որպիսիք չեն հանդիպում հայ փորձարկվողների մոտ:

Երրորդ գլխում, որը վերնագրված է «**«Haus» հասկացության իմաստային դաշտի կառուցվածքը գերմաներենում՝ հայերենի զուգադրությամբ**», ներմուծվել է իմաստային կադապարի միջոցով հասկացության կառուցվածքը ներկայացնելու գաղափարը, տրվել է կադապարի նկարագրությունը, որը կիրառվել է «տուն» հասկացության նկատմամբ:

«Հասկացության իմաստային կադապարի նկարագրությունը» ենթագլխում ներկայացվում է հասկացության իմաստային դաշտի կառուցվածքը՝ ըստ **Ջ. Դ. Պոպովայի և Ի. Ա. Ստերնինի** տեսության: Հասկացության կառուցվածքը պատկերվում է շրջանագծի տեսքով, որի կենտրոնում գերմիավորն (հիմնական հասկացությունն) է գտնվում, գերմիավորի շուրջը համախմբվում են ամենահիմնական իմաստները, որոնք կազմում են կադապարի միջուկը: **Ջ. Դ. Պոպովան և Ի. Ա. Ստերնինը** կարծում են, որ «հասկացության միջուկը լավագույնս գլխավոր բառային իմաստի միջոցով է արտահայտվում»⁸: Միջուկի շուրջը

⁸ Попова З. Д., Стернин И. А. Очерки по когнитивной лингвистике. Воронеж: Истоки, 2001, с. 61.

ձևավորվում է այսպես կոչված նախամիջուկային գոտին, իսկ եզրային գոտում տեղակայվում է այն ամենը, ինչ ներմուծվել է մշակույթով՝ ավանդույթներով, ժողովրդական և անհատական փորձով: Մակայն հարկ ենք համարում նշել, որ ոչ միայն հասկացույթը չունի հստակ սահմաններ, այլև նրա իմաստային կադրապարը կազմելիս դժվար է գտնել հստակ սահմաններ միջուկ, նախամիջուկ, եզրային գոտիների միջև: Ակնհայտ է սակայն, որ միջուկից հեռանալուն զուգընթաց տեղի է ունենում զուգորդումների աստիճանական խամրում:

Երկրորդ ենթագլխում («Haus» հասկացույթի միջուկի նկարագրությունը՝ հայերենի զուգադրությամբ) քննարկվում են գերմաներենի «Haus» հասկացույթի **միջուկը** կազմող ամենաբնորոշ ընդհանուր իմաստները՝ հայերենի զուգադրությամբ՝ *շենք/շինություն, բնակարան, ընտանիք, հայրենիք, օջախ/հարազատ տուն և հաստատություն*, որոնք ինչպես բառարաններում և շտեմարաններում են ներկայացված, այնպես էլ գիտափորձի մասնակիցների տված պատասխաններում են հանդիպում: *Չինաստիա և զանազան շինություններ, որոնք հատկացված են որոշակի նպատակի* իմաստները չեն ընդգրկվել միջուկի մեջ, քանի որ շտեմարաններում այս իմաստների հանդիպման հաճախականությունը ցածր է, իսկ փորձարկվողների զուգորդումներում ընդհանրապես չեն հանդիպում: **«Haus» հասկացույթն ըստ նախամիջուկային գոտին կազմող բաղադրիչների՝ հայերենի զուգադրությամբ** ենթագլխում քննարկվում են գլխավոր բառույթի հոմանիշները, որոնք կատարում են ընդհանուր իմաստը կոնկրետացնելու գործառույթ՝ բացահայտելով մարդու գիտելիքների ողջ բազմազանությունը տվյալ հասկացույթի վերաբերյալ: Ուսումնասիրվել են հատկապես *կացարան/բնակարան* մանրադաշտի հոմանիշները, քանի որ երկու լեզուների հոմանիշային բառարաններում էլ հատկապես *կացարան* իմաստն է ներկայացված: Ըստ **Զ. Դ. Պոպովայի և Ի. Ա. Ստեբնիի** կադրապարի՝ նախամիջուկային գոտում են գտնվում նաև «տուն» հիմքով կազմված բառաձևերը, ինչպես նաև «տուն» բաղադրիչով բարդ բառերը, քանի որ այս միավորները անմիջականորեն կապված են հասկացույթի միջուկի հետ՝ որպես նրա բառակազմական և ձևակազմական ածանցյալներ: Այս տեսակետից էլ անդրադարձ է կատարվել տվյալ հասկացույթի **ձևաբանական-բառակազմական** առանձնահատկություններին: «Բառակազմական և ձևաբանական ածանցյալ միավորների ներառումն ուսումնասիրության դաշտ թույլ է տալիս ավելի խորությամբ ներկայացել տվյալ հասկացույթի դրսևորած

իմաստների ամբողջությունը»⁹: Ձևաբանական-բառակազմական քննությունից պարզ է դառնում, որ «Haus/տուն» հասկացույթը քերականական ձևեր կազմելիս, իմաստով պայմանավորված, կարող է հանդես բերել որոշակի սահմանափակումներ և տարբեր աստիճանի արդյունավետություն: Այսպես, օրինակ, «տուն»-ը *շենք/շինություն* իմաստով թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում կարող է թեքվել հոլովական ողջ հարացույցով, մինչդեռ *տնտեսություն* իմաստով «տուն»-ը հոգնակի թիվ հանդես չի բերում: Իմաստներով պայմանավորված սահմանափակումներ կան ոչ միայն քերականական ձևերի կազմության, այլև բառակազմության ժամանակ: Անդրադարձ է կատարվել նաև «Heim» բառույթի ձևաբանական-բառակազմական յուրահատկություններին, որը «Haus» հասկացույթի մակրոաշտի նախամիջուկային գոտու շատ կարևոր բաղադրիչ է և որի իմաստային հարացույցը ամբողջանում է նաև *հասարակական կազմակերպություն, հաստատություն* իմաստներով, ինչպես՝ *Erholungsheim, Kinderheim, Sozialheim, Altersheim, Entbindungsheim* և այլն, որտեղ նշված բառերում **-heim** բաղադրիչը օգնում է ազատվել որոշ բացասական գույքորդումներից: Հայերենում այս իմաստներն արտահայտվում են «տուն» բառով կամ *-(ան)ոց* ածանցով, ինչպես օրինակ՝ *ծննդատուն, մանկատուն, ծերանոց, հիվանդանոց* և այլն: Միաժամանակ **-heim** բաղադրիչը կարող է ունենալ նաև բացասական իմաստ, եթե այն միանում է **suchen** բային, **heimsuchen** բարդ բայը նշանակում է *վնասակար ազդեցություն ունենալ, աղետ բերել*:

«Օջախ» բաղադրիչը նույնպես մի կողմից զգայական ջերմություն է առաջացնում հայերի գիտակցության մեջ, մյուս կողմից էլ բացասական իմաստ է արտահայտում այնպիսի արտահայտություններում, ինչպիսիք են՝ *համաճարակի օջախ, ժանտախտի օջախ, դժգոհության օջախ, դիմադրության օջախ, կոռուպցիայի օջախ, թրաֆիկինգի օջախ* և այլն:

««Haus/տուն» հասկացույթի իմաստային մանրադաշտերը» ենթազգլխում ուսումնասիրվել են «Haus» հասկացույթի լեզվական օբյեկտիվացման միջոցների հարուստ զինանոցից, մեր կարծիքով, ոչ պակաս տեղեկատվական՝ նրա եզրային գոտու բառային արտահայտությունները, քանի որ նրանք իրենց մեջ կրում են տվյալ հասկացույթին բնորոշ հատկանիշներ, բացահայտ և ներակա կերպով /էքսպլիցիտ և իմպլիցիտ/ կազմակերպում են ամբողջ հասկացույթային դաշտը և տարբեր իմաստային լրումների շնորհիվ թույլ են տալիս բացահայտել այդ

⁹ Попова З. Д., Стернин И. А. Очерки по когнитивной лингвистике. Воронеж: Истоки, 2001, с. 129.

հասկացույթի ազգային-մշակութային առանձնահատկությունները: «Տուն» հասկացույթի միջուկը կազմող կարևորագույն իմաստներից յուրաքանչյուրն իր հերթին ներկայացվել է որպես առաջին կարգի միկրոդաշտի միջուկ, որն իր մեջ է ներառում բաղադրիչներ, որոնք դիտարկվել են որպես երկրորդ և հետագա կարգերի միկրոդաշտեր: Այս միկրոդաշտերը «տուն» հասկացույթի միջուկից և նախամիջուկային գոտուց տարբեր հեռավորության վրա են գտնվում և կազմում են նրա մոտակա և հեռավոր եզրային գոտին:

Երրորդ գլխի հինգերորդ ենթազույխում («Haus» հասկացույթը գերմաներենի դարձվածաբանության մեջ՝ հայերենի զուգադրությամբ) դիտարկված են «տուն» հասկացույթի իմաստային դրսևորումները դարձվածքներում, քանի որ հենց դարձվածքներում է ամենից տեսանելի ազգային մշակութային բաղադրիչը: «Որպես աշխարհի լեզվական պատկերման միջոց հանդես են գալիս քարացած արտահայտությունները և դարձվածաբանական միավորները, որոնց յուրօրինակությունը ցանակացած կոնկրետ լեզվում կասկած չի հարուցում»¹⁰: Յուրաքանչյուր դարձվածաբանական միավորի մեջ դրված է **աշխարհը լեզվի և ազգային մշակույթի պրիզմայով ընկալելու հատկությունը**: Առանձին դարձվածքների լեզվամշակութային վերլուծության միջոցով փորձել ենք բացահայտել ու վերհանել ազգամշակութային իմաստները: Դարձվածքները փորձել ենք դասակարգել երկու խմբում. առաջին խմբում դիտարկվում են կայուն բառակապակցությունները, ասացվածքները և թևավոր խոսքերը, որոնցում «տուն»-ը *բնութագրման անմիջական առարկան է*: Այս խմբի դարձվածքներում «տուն» -ը երևում է իր տարբեր կողմերով՝ ի հայտ բերելով մշակութային բազմաշերտություն և բազմաշափություն: Երկրորդ խմբում ընդգրկված են այնպիսի դարձվածքներ, որոնցում «տուն» -ը հանդես է գալիս որպես *օժանդակ միջոց այլ հասկացույթների բնորոշման համար*: Դրանցում «տուն» -ը հանդես է գալիս *կին/տնտեսուհի, աշխատանք, խնայողություն, գաղտնապահություն, ամրություն, մտերմություն* և այլ իմաստներով: Երկու լեզուների դարձվածային ֆոնդում էլ «տուն» հասկացույթը հանդես է բերում ինչպես ընդհանուր, այնպես էլ միայն գերմաներենին կամ միայն հայերենին բնորոշ հետաքրքիր իմաստներ: Երկու լեզվամշակույթների համար ընդհանուր իմաստներ են՝ **շենք/շինություն** (*Erwirb ein Haus, das gemacht ist, und eine Frau, die noch zu machen ist/Մտն առնող*

¹⁰ Брутян Г. А. Гипотеза Сепира-Уорфа: Лекция, прочитанная в Лондонском университете в 1967 году. Ереван: Луйс, 1968, с. 5.

տունը կրակ ընկավ, ոչով չը հավատաց), **հարազատ օջախ** (*das Heim ist die Welt der Frau, die Welt ist das Heim des Mannes/Համերաշխությունը տուն է կառուցում, անհամերաշխությունը քանդում է այն*), **հայրենիք** (*Ost und West, daheim das Best/տունն արյուրին պահ տալ*), **ընտանիք** (*durch Weisheit wird ein Haus gebaut und durch Verstand erhalten /տան ծուխը վառ պահել*), **տնտեսություն** (*kleine Küche macht das Haus gross/ տունը չկա թան ու փոշի, գլուխը կապեր ա կարսիք փոշի*), **հաստատություն** (*gelbes Haus/դեղին տուն*), **բարեկեցություն** (*sein Haus hat einen festen Giebel/տուն ու տեղ դնել/դառնալ/լինել*), **զաղտնապահություն** (*was du hast in deinem Haus, das plaudre nicht vor Herren aus/տունը մերը, խոսքը մերը*), **խնայողություն** (*ein Haus mit grosser Küche geht in die Brüche/տանտիկինի մի ձեռք գող պիտի ըլնի*), **երկակի կյանք** (*zu Haus ein Igel und draussen ein Schniegel/տունը՝ քահանա, դուրսը՝ սատանա*), **մտերմություն/հարազատություն** (*die Tochter des Hauses/ տանու մարդ*), **անուշադրություն** (*es ist niemand zu Hause bei ihm/ տանը մարդ (չ)կա՞*), **լավ (չ)կշռադաստված գործ, պլան** (*sein Haus auf den Sand bauen/իր տունն ավազի վրա կառուցել*), **հյուրընկալություն** (*und wenn die Herzen weit sind, da ist auch das Haus nicht zu eng/էն տունը քանդվի, որ դոնաղ չի գա, էն դոնաղն էլ մեռնի, որ իրիկունը չի գա, առավոտն էթա*), **խելք** (*Er ist nicht ganz richtig unterm Dach, im Oberstübchen/ խելքը տուն կանչել*):

Միայն գերմաներենում են հանդիպում հետևյալ իմաստները՝ **ապահով կենսական տարածք** (*zu Hause helfen die Wände*), **համերաշխություն** (*Eintracht baut das Haus, Zwietracht reisst es nieder*), **հոգատարություն/խնամք** (*Alte Häuser, Uhren und Huren kosten viel Reparaturen*), **ազնվություն** (*der sein Haus bauet mit fremder Habe, läutet seinem Glück zu Grabe*), **տունը որպես անդրշիրիմյան կացարան** (*sein Haus bestellen*), **տունը որպես աշխարհ ընկալելու/չափելու միավոր**, (*Wenn es zu Hause regnet, so regnet's in der ganzen Welt*), **(խաբուսիկ) երջանկություն** (*Goldene Häuser haben oft bleierne Stunden*), **սեփական հնարավորությունների գնահատման չափանիշ** (*Man soll sein Haus nicht höher (grösser) bauen, als man langen kann*):

Միայն հայկական լեզվամշակույթին են բնորոշ **մաքրություն** (*տունը պոպոկի միջի պես պահել*), **(ապա)շնորհություն** (*ոչ տան, որ տեղաց*), **հուսալիություն** (*տանը՝ տունը կը պահե*), **հարզանք/հարզանք մեծի հանդեպ** (*տանը որ մի մենծ չըլնի, տեղը քոթուկ կը դնեն*), **պանդիստություն և տեղահանություն** (*տունն փոխես՝ տնով մեկ կը քանդվի*) իմաստները:

Եզրակացությունների մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները.

- **«Haus/տուն»** հասկացույթը ճանաչողական մեծ ներուժով մտային միավոր է թե՛ գերմաներենի, թե՛ հայերենի հասկացութաուղորտներում: Այս մարդաբանական հասկացույթը լեզվակիրների աշխարհընկալման և աշխարհի պատկերման, նրանց արժեհամակարգի և խոսքային վարքի կարևոր բաղադրիչներն է:
- **«Տուն»**-ը կարևորագույն տարածական արտեֆակտ՝ նյութական մշակույթի տարր է, որը կարևոր տեղ է զբաղեցնում աշխարհի լեզվական պատկերում: Լինելով նյութական՝ «տուն»-ը սերտորեն կապված է լեզվակիրների զգայական աշխարհի հետ և ունի հոգևոր, մշակութային արժեք: Այն գուգորդվում է **ապահովության, ջերմության, պաշտպանվածության, անվտանգության, համերաշխության, սիրո, պատասպարվածության** զգացումների հետ: «Տուն»-ը կարևոր իրողություն է, որն արտացոլում է ոչ միայն տվյալ լեզվով խոսող հանրության կենսափորձն ու աշխարհայացքի յուրօրինակությունը, այլև առանձին անհատին բնորոշ **պատկերացումների, ընկալումների, գիտելիքների, գուգորդումների, ապրումների ամբողջությունը:**
- **«Տուն»** հասկացույթի ազգային յուրօրինակությունը տվյալ ազգի համար տան արտաքին տեսքի և ներքին հարդարման, *տունը/կենցաղը* վարելու, իր և այլոց տան հանդեպ վերաբերմունքի, իր *տուն/հայրենիքի* ընկալման մեջ է: Գերմանացու համար **«Haus»**-ն առաջին հերթին իր *Privatsphäre*-ն է՝ (անձնական տարածքը, որը միայն նրան է պատկանում) իր ապաստանը, ուր ամեն ոք չէ, որ թույլտվություն ունի մտնելու: Դա նրա *կենսական ապահով տարածքն* է, որտեղ կարելի է պատասպարվել և որի մասին պետք է հոգ տանել ու խնամել: **«Haus»**-ը գերմանացու համար իր կարգավիճակի խորհրդանիշն է: Հայի համար **«տուն»**-ը, կենսական տարածք լինելուց զատ, իր ընտանիքի, մարդկային բարձր արժանիքների, հյուրասիրության խորհրդանիշն է: **«Տուն»**-ն անգամ սուրբ է համարվում:
- Իմաստաբանորեն հասկացույթն ունի մակրոդաշտի կառուցվածք՝ **միջուկ, նախամիջուկային գոտի** և ընդգրկուն **եզրային գոտի** շերտերով: Հասկացույթի *միջուկը* ներկայացնում է նրա պրոտոտիպը՝ ավելի դյուրին ընկալվող, ավելի վառ ու կոնկրետ պատկերը: *Նախամիջուկային գոտում* գտնվում է ձևաբանական հարացույցը՝ գլխավոր բառույթի բառակազմական և ձևակազմական ածանցյալները, ինչպես նաև՝ հոմանիշները: Ավելի վերացական հատկանիշները կազմում են եզրային գոտին: Մոտակա *եզրային գոտին* մակրոդաշտի ընդարձակ մասն է կազմում. այն ներկայացնում է երկրորդ կարգի

մանրադաշտերի բառապաշարը, իսկ *հեռու եզրում* գտնվում են այլ կարգերի մանրադաշտեր:

- Գերմաներենում **«Haus»** հասկացույթի որոշ իմաստներ **Heim** բառույթով են արդիականանում: *Հարազատ/հայրական տուն, երկիր/հայրենիք, պատսպարվածություն, պաշտպանվածություն*, ինչպես նաև *հասարակական կազմակերպություն, հաստատություն* իմաստներն արտահայտվում են **Heim** բառույթով: Heim-ը շատ է հանդիպում դարձվածային միավորներում, ակտիվ է բառակազմական կաղապարներում, գերազանցում է **«Haus»**-ի հաճախականությունը, այդ իսկ պատճառով էլ նպատակահարմար ենք համարում **Heim** բառույթը ևս ներառել միջուկի մեջ, չնայած այն **«Haus»**-ին լրիվ համարժեք չի կարող համարվել: Ջուզադրելով հայերենի նյութին՝ կարող ենք ասել, որ հայերենում **«տուն»** հասկացույթի բացարձակ միջուկը **տուն** բառույթով է ներկայացված:

- **«Haus/տուն»** հասկացույթն առկայանում է լեզվական տարբեր միջոցներով, որոնց զուգադրական, ձևաբանական վերլուծությունն ի հայտ է բերում բազմաթիվ յուրօրինակություններ ինչպես բովանդակության, այնպես էլ՝ արտահայտության պլաններում:

- Ըստ բառարանային և շտեմարանային իմաստների հետազոտության, ինչպես նաև զուգորդային գիտափորձի արդյունքների և լեզվի դարձվածային ֆոնդում ներկայացվածության՝ **«Haus/տուն»** հասկացույթի միջուկը կազմող կարևորագույն իմաստներն են *շենք/շինություն, բնակարան, ընտանիք, հայրենիք, օջախ/հարազատ տուն և հաստատություն* իմաստները:

- **«Haus/տուն»** հասկացույթի բառարանային բոլոր իմաստները հանդիպում են էլեկտրոնային շտեմարաններում գրեթե այնպիսի հաճախականությամբ, որն ուղիղ համեմատական է բառարանում ներկայացված իմաստների հաջորդականությանը: Շտեմարանում հանդիպում են նաև իմաստներ, որոնք ամրագրված չեն բառարաններում:

- Եթե բառարաններում և շտեմարաններում **«Haus/տուն»** հասկացույթի միջուկային իմաստներից առաջնայինը *շենք/շինություն և կացարան* իմաստներն են, ապա ըստ ազատ զուգորդային գիտափորձի արդյունքների՝ թե՛ գերմանացի, թե՛ հայ փորձարկվողների գիտակցության մեջ այս հասկացույթի *ընտանիք* իմաստն ամենամեծ զուգորդելիությունն է հանդես բերում: Գերմաներենի բառարանում *ընտանիք* իմաստը 7-րդ տեղում է, իսկ հայերենի բառարանում այն 13-րդ տեղից հայտնվել է 3-րդ տեղում՝ համալրելով կարևոր միջուկային

իմաստների շարքը, և, այնուամենայնիվ, ոչ մի լեզվում այն բառարանային առաջին իմաստ չի դարձել:

- Հայտնի է, որ մշակութային հասկացույթները բավականին կարծր են և դժվար են մոդիֆիկացվում, սակայն մեր գիտափորձի արդյունքներն ուրվագծում են գերմաներենում **«Haus»** հասկացույթի իմաստային զարգացման նոր միտում, որը ենթադրում է գիտակցության մեջ **«Haus»** հոգևոր հասկացույթի նկատմամբ արժեքային վերաբերմունքի փոփոխություն:

- **«Haus/տուն»** հասկացույթը շատ վառ է պատկերված դարձվածքներում, այն վեր է հանում մարդկային բնավորության գծեր ու որակներ, զգայական ընկալումներ, որոնք թե՛ դրական, թե՛ բացասական երանգավորում ունեն: Դարձվածքներում էլ այս բաղադրիչը հանդես է գալիս թե որպես ***տվյալ ասույթի անմիջական վերաբերելի***, թե որպես ***օժանդակ միջոց այլ հասկացույթների բնորոշման համար*** (*կին/տնտեսուհի, աշխատանք, խնայողություն, ամբողջուն, մտերմություն* և այլն): **«Haus/տուն»** բաղադրիչով դարձվածքները համամարդկային արժեքներ և խորը մշակութային շերտեր են պարունակում. *կնոջ դերը, տղամարդու դերը, տնտեսվարման ավանդույթները և այլն*: Գերմաներենի **«Haus»** հասկացույթով դարձվածքների շարքը համալրում են առանձին առանձնատների փորագրությունները՝ կատարված քարի, փայտի կամ մետաղի վրա: Դրանք հիմնականում կյանքի անցողիկ լինելու և «տուն»-ն Աստծո կամ Սուրբ Ֆլորիանի հովանավորությանը հանձնելու բովանդակությամբ են: Հայերեն այսօրինակ փորագրություններ կարելի է հանդիպել եկեղեցիների վրա՝ կատարված հիմնականում կառուցողի կողմից: Ի տարբերություն գերմաներենի, հայկական լեզվամշակույթին հատկապես բնորոշ են «տուն» հասկացույթով *հորդորները, անեծքներն ու օրհնանքները: Պանդխտություն և տեղահանություն* իմաստի առկայությունը հայերենի «տուն» բաղադրիչով դարձվածքներում և դրա բացակայությունը գերմաներենի դարձվածքներում կապվում է պատմական անցքերի և ժողովրդի անցած ճանապարհի ու ճակատագրի հետ: Հայերեն դարձվածքներում առանձնակի տեղ է զբաղեցնում նաև «տուն» հասկացույթի մեկ այլ իմաստ՝ *մեծի* դերը տան մեջ :

- **«Haus/տուն»** հասկացույթը քերականական ձևեր կազմելիս, իմաստով պայմանավորված, հանդես է բերում որոշակի սահմանափակումներ և ունի տարբեր աստիճանի արդյունավետություն: Իմաստներով պայմանավորված սահմանափակումներ կան ոչ միայն քերականական ձևերի կազմության, այլև բառակազմության ժամանակ: Թե՛ «Haus/Heim» և թե՛ «տուն/օջախ»

բաղադրիչները շատ արդյունավետ են բառակազմական տեսանկյունից: «Haus/Heim» բաղադրիչներով գերմաներենում առավելապես բարդ բառեր են կազմվում, իսկ հայերենում՝ հարադիր բարդություններ: «Haus» բաղադրիչով բարդ բառերի մի ստվար խումբ լակունաներ են, այսինքն՝ չունեն իրենց համարժեքը հայերենում (Mehrfamilienhaus, Reihenhaush): Այս փաստը ևս վկայում է հասկացությունների, թեպետ աննշան, ազգային մշակութային տարբերությունների մասին:

Այսպիսով՝ **«Haus/տուն»** հասկացությոը բազմաշերտ և բազմաչափ իմաստային կառույց է, խորը մշակութային շերտերով, որոնք տեսանելի են դառնում մարդաբանական, ազգային, մշակութաբանական, լեզվաբանական ուսումնասիրությունների և բազմակողմանի վերլուծությունների արդյունքում:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Մշակութային լակունաների թարգմանական խնդիրները // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի, N 1(27), Երևան, 2013, էջ 244 -252:
2. Գերմաներենի և հայերենի «տուն» բաղադրիչով դարձվածքների զուգադրական վերլուծություն // «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, N 2(55), «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, էջ 136-146:
3. «Տուն» հասկացությի դրսևորումները ձևաբանական մակարդակում (գերմաներեն-հայերեն զուգադրություն) // «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, N 3(56), «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, էջ 47-54:

ПАПОЯН СИРАНУШ ГЕВОРКОВНА

КОНЦЕПТ “ДОМ” В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

(в сопоставлении с армянским)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07- “Германские языки”

Защита состоится 22-го октября, 2014 г., в 12:30 часов, на заседании специализированного совета 009- “Германские языки” ВАК РА при Ереванском государственном университете.

Резюме

Диссертационное исследование посвящено анализу концепта “дом” в немецком языке, который является одним из ключевых культурных констант и входит в число важнейших концептов, составляющих ядро языкового сознания любого народа.

Основной **целью работы** является моделирование концепта “дом”, а также выявление особенностей изучаемого концепта в немецкой концептосфере в сопоставлении с армянским.

Для достижения поставленной цели в работе ставятся следующие конкретные **задачи**: 1. Изучить словарные значения концепта “дом” в немецком языке, сопоставить их со словарными значениями концепта “дом” в армянском языке и выявить как общие, так и типичные только для одного языка значения. 2. Изучить материалы немецкого лингвистического корпуса IDS Mannheim, сопоставить их с материалами армянского лингвистического корпуса «ԱԴԵՉԱԿ», выявить их общие и специфические значения, сопоставить словарные значения с корпусными значениями. 3. Провести ассоциативный эксперимент и дополнить семантическое поле концепта “дом” результатами экспериментальных исследований и выявить тенденции развития. 4. Изучить фразеологические обороты с компонентом “дом”, выявить национально-культурные компоненты, характерные для немецкого языка, сопоставить их с теми же в армянском языке. 5. Выявить средства репрезентации концепта “дом” на разных языковых уровнях в

немецком языке: лексическом, фразеологическом, морфологическом, сопоставляя их с средствами репрезентации концепта “дом” в армянском языке.

В работе использованы **методы** дескриптивного анализа, ассоциативного эксперимента, компонентного анализа, а также прием полевых исследований.

Актуальность предпринятого исследования обусловлена особым интересом языковедения к когнитивным исследованиям в целом и к концептуальным описаниям в частности, которые способствуют прояснению таких важных для лингвистики вопросов, как определение статуса, содержания, структуры и национальной специфики основных культурных концептов в языковой картине мира.

Новизна исследования состоит в том, что впервые проведено исследование концепта “дом” в немецком языке, построена и детально рассмотрена целостная полевая структура данного концепта, а также выявлены средства его репрезентации на разных языковых уровнях. В построение модели внедрены также результаты ассоциативного эксперимента. Впервые проведено также сопоставление с армянским языком.

Теоретическая значимость работы заключается в рассмотрении вопросов теории и практики когнитивного описания концептуальных полей в рамках национальных концептосфер. Данное исследование позволяет дополнить и углубить существующие представления о статусе концепта “дом”, его содержании и структуре, национальной специфике, средствах и способах репрезентации в немецкой языковой картине мира.

Практическая ценность исследования состоит в том, что его результаты могут быть использованы при лингвокультурных и концептологических исследованиях, а также при создании практических пособий по изучению немецкого языка и словарей.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и словарей, а также приложения.

Во введении представляются основные цели и задачи работы.

В первой главе освещаются основные понятия когнитивной лингвистики как междисциплинарной лингвистической науки, изучается концептосфера как совокупность всех концептов языка, анализируется взаимосвязь и взаимодействие языка и культуры.

Во второй главе исследуется история развития артефакта “дом”, изучаются словари собственных имен и географических названий в немецком и армянском языках. Рассматриваются как словарные значения концепта “дом” в обоих языках, так и значения, которые встречаются в немецком корпусе IDS Mannheim и в армянском корпусе «ԱԴԵՎԱԿ». Ассоциативный эксперимент расширяет границы семантического поля изучаемого концепта, вбирая в себя многие ситуативные и коннотативные значения.

В третьей главе исследуется сложная полевая структура концепта “дом” (представленная ядром, приядерной зоной и обширной периферией).

В заключении обобщаются полученные результаты.

SIRANUSH PAPOYAN

THE CONCEPT “HOUSE” IN GERMAN
(in comparison with Armenian)

The defense of the thesis will be held on October 22, 2014 at 12:00, at the session of the Specialized Council 009 HAC (Higher Attestation Commission) at Yerevan State University, RA (address: Yerevan, Alex Manougi St. 1).

Summary

The concept “House” represents one of the most important cultural, mental and linguistic spatial constants which forms the linguistic image peculiar to German and Armenian world outlook. The concept “House” reveals not only universal features but also specific national, mythical, religious, sociocultural, philosophical, imagery elements. It comprises a wide range of essential features connected with home. Some sensual, abstract and individual perceptions are also represented.

The aim of the research is to study different approaches of the concept “House”, to build its semantic model with the linguistic means of actualization of the concept “House”, to reveal its main peculiarities and to compare them with Armenian.

The topicality of the given research is conditioned by the turn of linguistics to anthropological paradigm of language study, as nowadays the conceptual descriptions are of great interest.

The novelty of the thesis is that for the first time the perception of the concept “House” has been compared in German and Armenian linguocultures. Besides the meaning and data base fixed in dictionaries, the results of associative experiment are included in the research as well.

Introduction represents the subject, the main objectives, the novelty, theoretical and practical values of the research.

Chapter I aims at studying cognitive linguistics as an interdisciplinary theory as well as the connection between language and culture and their influence on each other.

Different approaches to interpreting the term “concept” and the “concept domain” as the entity of language, are also discussed in Chapter I.

In Chapter II an attempt has been made to analyse home artifact development history in German and Armenian linguocultures. Dictionary meanings of the concept “House”, the meanings that come across in IDS Mannheim and ԱՐԵՎԱԿ corpora are also surveyed in Chapter II. The associative experiment conducted by us takes our research to a pragmatic level

In Chapter III the core, precore zone and wide periphery zone of the concept 'House' are represented. The most typical meanings for two linguocultures are united in the core. The synonyms, antonyms, as well as word forming derivatives of the main lexeme are in the precore zone. Ethnocultural and linguocultural interesting features which are closely related to native speakers' and language bearers' world outlook, mentality, national consciousness, customs and traditions, world perception are in the periphery. In two linguocultures the concept “House” is inseparably connected to the concept of family. The concept “House” is also surveyed in phraseology.

The results of the study have been summed up in the conclusion.

